ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ
ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05

19 ԱՊՐԻԼԻ 2024թվական

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 20 անդամներ:
Բացակա էին՝ Գայանե Աիարոնյանը, Արտակ Անդրեասյանը, Կարապետ Բադալյանը, Հայկ Մելքոնյանը, Կարապետ Մեսրոպյանը, Անի Նահապետյանը, Էլմիրա Ոսկանյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**
Վարդան Գաբրիելյան, Անահիտ Հովհաննիսյան, Սուրեն Ամիրջանյան, Լևոն Գրիգորյան, Տիգրան Բաբախանյան, Լուսինե Աստաբացյան, Արմինե Կոստանյան, Հերմինե Բաբայան, Հասմիկ Ավետիսյան, Ռուզաննա Ալեքսանյան

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Համբարձումյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Վարդան Գաբրիելյանը**

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/***

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի համաձայն **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 19-ի հերթական նիստի օրակարգը.

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱ ԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 334-Ն ՈՐՈՇՄԱՆԸ ԿԻՑ 2-ՐԴ, 3-ՐԴ, 4-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 309-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 310-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 42-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7.ԱՆԻԿ ՇՄԱՎՈՆԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8.ԷԴՎԱՐԴ ԱՐՇԱՄԻ ՋԱՆԱԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9.ՍԵԴՐԱԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ, ՌԻՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ, ԹՈՎՄԱՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ, ՄԻՔԱՅԵԼ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.ԱՐՄԵՆ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ, ՄԱՐԻՆԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ, ԴԱՎԻԹ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ, ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11.ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

12.ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԱՎՈՒՇԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

13.ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԱՆՆԱ ՀԵՆՐԻԿԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

14.ԿԼԱՐԱ ԳԱՌՆԻԿԻ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

15.ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

16.ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17.ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՎՈԼՈԴՅԱ ԼԱԶԱՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

18.ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԱՆՈՒԿ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

19.ՆԻԿՈԼԱՅ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ, ՆՈՒՐՎԱՐԴ ԲԱԽՇԻԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ՅՈՒՐԻԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՄԲ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

20.ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

21.ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 225-Ա ՈՐՈՇՄԱՆ 33-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N33-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

23.,,ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

24.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N225-Ա ՈՐՈՇՄԱՆ 28-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N243-Ա ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N270-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ 28-ՐԴ ՀԱՎԵԼԱՎԱԾՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

25.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 09-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 334-Ն ՈՐՈՇՄԱՆԸ ԿԻՑ 2-ՐԴ, 3-ՐԴ, 4-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկ. ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 334-Ն որոշմանը կից 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ /հավելվածները կցվում են/:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:
Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ն/
Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ***
***/Զեկ. ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/***

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի, ,,Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը (հաղորդումը կցվում է) **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի կատարման արդյունքների վերաբերյալ հաղորդումը՝
ա/ եկամուտների կատարման գծով՝ համաձայն հավելված 1-ի:
բ/ ծախսերի կատարման գծով՝ համաձայն հավելված 2-ի:
Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98-Ն/
Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 309-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Յայաստանի Յանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Մասիս համայնքի կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի

պետ Սուրեն Ամիրջանյանի 03.04.2024 թվականի զեկուցագիրը **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 15-ի N309-Ա որոշմանը կից հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ /հավելվածը կցվում է/:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի ապրիլի 22-ին:
Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99-Ա/
Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 310-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Յայաստանի Յանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Մասիս համայնքի կոմունալ տնտեսության և տրանսպորտի բաժնի պետի տեղակալ Առաքել Մինասյանի 10.04.2024 թվականի զեկուցագիրը **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 15-ի N310-Ա որոշմանը կից հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ /հավելվածը կցվում է/:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի ապրիլի 22-ին:
Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100-Ա/
Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 42-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 14-ի << ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՐԱՏ 1 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱԶՓԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՆԱԽԱԳԻԾԸ (ԳՈՏԵՎՈՐՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> N 42-Ա որոշման վերնագրում և 1-ին կետում *գրառված ,, Արարատ 1 ,, բառը և թիվը փոխարինել ,,Արարատ 2 ,, բառով և թվով :*
Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101-Ա/

Լսեցին

***ԱՆԻԿ ՇՄԱՎՈՆԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Էդվարդ Ջանազյանի դիմումը /28.03.2024թ. մտից՝ 4553 /՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Հայանիստ բնակավայրում գտնվող Անիկ Շմավոնի Ամիրխանյանին սեփականության իրավունքով պատկանող 03-052-0105-0046 կադաստրային ծածկագիրը կրող, 0.292 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի հողամասի նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության՝ շնաբուծարան կառուցելու նպատակով:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102-Ա/

Լսեցին

***ԷԴՎԱՐԴ ԱՐՇԱՄԻ ՋԱՆԱԶՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Էդվարդ Ջանազյանի դիմումը /03.04.2024թ. մտից՝ 4769 /՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Գետափնյա բնակավայրում գտնվող Էդվարդ Արշամի Ջանազյանին սեփականության իրավունքով պատկանող 03-030-0108-0024 կադաստրային ծածկագիրը կրող, 0.03203 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի հողամասի նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային և գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամաս կառուցելու նպատակով:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ա/

Լսեցին

***ՍԵԴՐԱԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ, ՌԻՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ, ԹՈՎՄԱՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ, ՄԻՔԱՅԵԼ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Սեդրակ Աբրահամյանի դիմումը /05.04.2024թ. մտից՝ 4942 /՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Հովտաշատ բնակավայրում գտնվող Սեդրակ Ֆարմանի Աբրահամյանին, Ռիմա Անդրանիկի Աբրահամյանին, Թովմաս Սեդրակի Աբրահամյանին, Միքայել Սեդրակի Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանող 03-054-0285-0002 կադաստրային ծածկագիրը կրող, 0.70 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի հողամասի նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային և արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության՝ ձկնաբուծական տնտեսություն կառուցելու նպատակով:

Կողմ-16 Դեմ-2 Ձեռնպահ-2

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104-Ա/

Լսեցին

***ԱՐՄԵՆ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ, ՄԱՐԻՆԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ, ԴԱՎԻԹ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ, ԱՐՈՒՍՅԱԿ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 9-րդ, 16-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով Դավիթ Արմենի Առուստամյանի դիմումը /25.03.2024թ. մտից՝ 4297 /՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ Արարատի մարզի, Մասիս համայնքի Խաչփար բնակավայրում գտնվող Արմեն Սուրենի Առուստամյանին, Մարինա Արամայիսի Առուստամյանին, Դավիթ Արմենի Առուստամյանին և Արուսյակ Արմենի Առուստամյանին սեփականության իրավունքով պատկանող 03-050-0109-0004 կադաստրային ծածկագիրը կրող, 0.30 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի հողամասի նշանակությունը փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային և

գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության՝ գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամաս կառուցելու նպատակով:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105-Ա/

Լսեցին

***ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 620 հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ և հիմք ընդունելով հողամասի վարձակալ Արևիկ Սիմոնի Աղաբաբյանի դիմումը /09.04.2024թ, մտից 5193/ ՝**Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի համայնքի ավագանին որոշում է.**

1. Տալ համաձայնություն՝ Արևիկ Սիմոնի Աղաբաբյանի կողմից վարձակալված, Արարատի մարզի Մասիս համայնքի Սիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող 03-083-0108-0017 կադաստրային ծածկագրով 0,91694 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության խոտհարք հողատեսքի հողամասը ենթավարձակալության տրամադրելու վարձակալության տրված ժամկետով և պայմաններով Արման Հայկի Մելքոնյանին:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106-Ա/

Լսեցին

***ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԱՎՈՒՇԻ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն, № 731-Ն որոշումների պահանջներով և հաշվի առնելով, որ Հովհաննես Չավուշի Թորոսյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը. **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ, գ. Հովտաշատ, Հ. Բաղրամյան փողոց 90/2 հասցեում գտնվող հասարակական նշանակության շինությունը (մակերեսը՝ 21,15քմ) և դրա սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած 0.00271 հա բնակավայրերի հասարակական

կառուցապատման նշանակության հողամասը (ծածկագիր՝ 03-054-0024-0073) ուղղակի վաճառքով օտարել բնակիչ՝ Յովհաննես Չավուշի Թորոսյանին:
2.Շինության ուղղակի վաճառքի գինը կազմում է 230134 (երկու հարյուր երեսուն հազար հարյուր երեսունչորս) ՀՀ դրամ:
3.Շինությամբ զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 33090 (երեսուներեք հազար իննսուն) ՀՀ դրամ:
4. Սահմանված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքի պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 26000 ( քսանվեց հազար) ՀՀ դրամ վճարման անդորրագրերի հիման վրա:
5. Գույքն օտարելուց հետո համայնքի հաշվապահական և հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:
Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107-Ա/
Լսեցին

***ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԱՆՆԱ ՀԵՆՐԻԿԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***
***/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի № 912-Ն, № 731-Ն որոշումների պահանջներով և հաշվի առնելով, որ Աննա Հենրիկի Գասպարյանի կողմից ընդունվել է ուղղակի վաճառքով գնելու առաջարկը. **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ, Ջրահովիտ 1-ին փողոց 6 հողամաս հասցեում գտնվող տնտեսական շինությունը (մակերեսը՝ 30,8քմ) և դրա սպասարկման ու պահպանման համար զբաղեցրած 0.02922 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման նշանակության հողամասը (ծածկագիր՝ 03-079-0021-0052) ուղղակի վաճառքով օտարել բնակիչ՝ Աննա Հենրիկի Գասպարյանին:
2.Շինության ուղղակի վաճառքի գինը կազմում է 74475 (յոթանասունչորս հազար չորս հարյուր տասնհինգ) ՀՀ դրամ:
3.Շինությամբ զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 356777 (երեք հարյուր հիսունվեց հազար յոթ հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամ:
4. Սահմանված չափերով ձևավորված վաճառքի գնին (վարձավճարին) հավելվում են միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքի պետական գրանցման համար իրականացված վճարները՝ 26000 ( քսանվեց հազար) ՀՀ դրամ վճարման անդորրագրերի հիման վրա:
5. Գույքն օտարելուց հետո համայնքի հաշվապահական և հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություններ:
Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108-Ա/

Լսեցին

***ԿԼԱՐԱ ԳԱՌՆԻԿԻ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿՈՎ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Կլարա Քոչինյանի լիազորած անձ Ալեքսան Ժոժիկի Քոչինյանի դիմումը /մտից ՝ 13.03.2024թ. թիվ 3502/՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.ՀՀ Արարատի մարզ Մասիս համայնքում գտնվող ք. Մասիս, Նոր թաղամաս 2/23 հասցեում 0,0047հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը /ծածկագիր՝ 03-003-0137-0288, սեփականության իրավունքի վկայական N 1502783/, որը ծանրաբեռնված է Կլարա Գառնիկի Քոչինյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակով /ծածկագիր՝ 03-003-0137-0288-0001/ և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ուղղակի վաճառքով մեկ տարվա ընթացքում օտարել Կլարա Գառնիկի Քոչինյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 6835 ՀՀ դրամ:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109-Ա/

Լսեցին

***ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում Մասիս համայնքում գտնվող հողամասերը տրամադրել օտարման ՝ աճուրդ վաճառքի միջոցով.

1.1 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, ք. Մասիս, 5-րդ թաղամաս 3-րդ փողոց, 47 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-003-0035-0015 կադաստրային ծածկագրով, 0.10213 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 6663 ՀՀ դրամ,

1.2 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Մարմարաշեն, Մասիսի խճուղի 37 հասցեումգտնվող բնակավայրերի նպատակային հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 03-058-0205-0017 կադաստրային ծածկագրով,

0.03193 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1 քմ- ը 4332 ՀՀ դրամ:

1.3 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Սիս բնակավայր Նոր թաղամասի 1-ին փողոց, 2-րդ շարք 17/1 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-083-0019-0050 կադաստրային ծածկագրով, 0.02341 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 792 ՀՀ դրամ,

1.4 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Սիս բնակավայր Նոր թաղամասի 1-ին փողոց, 2-րդ շարք 17 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-083-0019-0051 կադաստրային ծածկագրով, 0.023336 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 792 ՀՀ դրամ,

1.5 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Սիս բնակավայր Նոր թաղամասի 1-ին փողոց, 2-րդ շարք 17/3 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-083-0019-0052 կադաստրային ծածկագրով, 0.0235 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 792 ՀՀ դրամ,

1. 6 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Սիս բնակավայր Նոր թաղամասի 1-ին փողոց, 2-րդ շարք 17/2 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-083-0019-0053 կադաստրային ծածկագրով, 0.02345 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 792 ՀՀ դրամ:

1.7 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Հովտաշատ բնակավայր Տաթևի փողոցի, 2/1 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-054-0038-0052 կադաստրային ծածկագրով, 0.06926 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 1221 ՀՀ դրամ,

1.8 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Հովտաշատ բնակավայր Ե. Չարենցի փողոցի, 2/2 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-054-0031-0004 կադաստրային ծածկագրով, 0.02083 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 1221 ՀՀ դրամ,

1.9 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Հովտաշատ բնակավայր Ս. Շահումյան փողոցի, 75 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-054-0048-0048 կադաստրային ծածկագրով, 0.05563 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 1221 ՀՀ դրամ,

1.10 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Հովտաշատ բնակավայր 2-րդ փողոց, 1-ին փակուղի 1 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական

նշանակության 03-054-0001-0040 կադաստրային ծածկագրով, 0.02541 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 1221 ՀՀ դրամ,

1.11 ՀՀ, Արարատի մարզ, Մասիս համայնք, Հովտաշատ բնակավայր Կամոյի փողոց, 1 հողամաս հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 03-054-0043-0003 կադաստրային ծածկագրով, 0.06019 հա մակերեսով հողամասը, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 100%-ի չափով, 1 քմ- ը 1221 ՀՀ դրամ

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 110-Ա/

Լսեցին

***ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մեկ տարվա ընթացքում նշված հողամասերն օտարել աճուրդ վաճառքի միջոցով.

1.1 Մասիս համայնքի Մարմարաշեն բնակավայրում գտնվող 03-058-0221-0001 կադաստրային ծածկագրով, 1.87313 հա գյուղատնտեսական նպատակային վարելահող գործառնական նշանակության հողամասը /վկայական N 28032024-03-0019/, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 1096000 /մեկ միլիոն իննսունվեց հազար / ՀՀ դրամ:

1.2 Մասիս համայնքի Մարմարաշեն բնակավայրում գտնվող 03-058-0205-0033 կադաստրային ծածկագրով, 0.05183 հա գյուղատնտեսական նպատակային վարելահող գործառնական նշանակության հողամասը /վկայական N 28032024-03-0082/, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 77200 /յոթանասունյոթ հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ:

1.3 Մասիս համայնքի Հովտաշատ բնակավայրում գտնվող 03-054-0301-0003 կադաստրային ծածկագրով, 1.93 հա գյուղատնտեսական նպատակային վարելահող գործառնական նշանակության հողամասը /վկայական N 27022024-03-0114/, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 5840700 / հինգ միլիոն ութ հարյուր քառասուն հազար յոթ հարյուր / ՀՀ դրամ:

1.4 Մասիս համայնքի Սիս բնակավայրում գտնվող 03-083-0108-0026 կադաստրային ծածկագրով, 0.03509 հա գյուղատնտեսական նպատակային վարելահող գործառնական նշանակության հողամասը /վկայական N 09042024-03-0044/, մեկնարկային գին սահմանել հողամասի կադաստրային արժեքի 150%-ի չափով, 53000 / հիսուներեք հազար / ՀՀ դրամ:

Կողմ-19 Դեմ-1 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 111-Ա/

Լսեցին

***ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՎՈԼՈԴՅԱ ԼԱԶԱՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով , հիմք ընդունելով Վոլոդյա Առաքելյանի դիմումը /մտից՝ 13.12.2023թ. թիվ 17016/, 19.08.2005թ, թվականին կնքված թիվ 1406 վարձակալության պայմանագիրը և հաշվի առնելով, որ Մասիս համայնքի, Մասիս քաղաքի 03-003-0056-0034 ծածկագիրը կրող 0,0037 հա հողամասը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամաս՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող, Վոլոդյա Լազարի Առաքելյանի կողմից վարձակալած՝ Մասիս համայնքի Մասիս քաղաքում գտնվող 03-003-0056-0034 ծածկագրով 0,0037 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողատեսքի հողամասը / վկայական N 2039094/, թույլատրել ուղղակի վաճառքով մեկ տարվա ընթացքում, գնման նախապատվության իրավունքով, տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքի 100 %-ով /1 քմ-ը 6835 ՀՀ դրամ/ ընդհանուր 232390 /երկու հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր իննսուն/ ՀՀ դրամ արժեքով օտարել Վոլոդյա Լազարի Առաքելյանին:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 112-Ա/

Լսեցին

***ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՄԱՆՈՒԿ ՎԱՐԱԶԴԱՏԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջները և հաշվի առնելով Մանուկ Մանուկյանի դիմումը /մտից ՝ 03.04.2024թ. թիվ 4747/՝ **Հայաստանի Հնարապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.ՀՀ Արարատի մարզ Մասիս համայնք Նոր Խարբերդ 20-րդ փողոց 130/3 հողամաս հասցեում 0,03006 հա բնակավայրերի այլ հողատեսքի հողամասը /ծածկագիր՝ 03-070-0030-0013, սեփականության իրավունքի վկայական N 22122020-03-0008/, որը սահմանակից է Մանուկ Վարազդատի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող /ծածկագիր՝ 03-070-0030-0012/ հողամասին և որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով

սահմանված հողերի ցանկում, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով մեկ տարվա ընթացքում օտարել Մանուկ Վարազդատի Մանուկյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 1335266 /մեկ միլիոն երեք հարյուր երեսունհինգ հազար երկու հարյուր վաթսունվեց / ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 4442/ չորս հազար չորս հարյուր քառասուն երկու / ՀՀ դրամ:

Քվեարկության արդյունքով որոշումն չընդունվեց

Կողմ-0 Դեմ-20 Ձեռնպահ-0

Լսեցին

***ՆԻԿՈԼԱՅ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ, ՆՈՒՐՎԱՐԴ ԲԱԽՇԻԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ՅՈՒՐԻԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՄԲ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՍԱՀՄԱՆԱԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջները և հաշվի առնելով Նիկոլայ Վլադիմիրի Հարությունյանի դիմումը /մտից ՝ 17.01.2023թ. թիվ 576, /. **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է .**

1.ՀՀ Արարատի մարզ Մասիս համայնք Մասիս քաղաք Երևանյան փողոց 80/1 հողամաս հասցեում 0,0045 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը /ծածկագիր՝ 03-003-0056-0046, սեփականության իրավունքի վկայական N 21122022-03-0034/, որը սահմանակից է Նիկոլայ Վլադիմիրի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող /ծածկագիր՝ 03-003-0056-0022/ հողամասին և ընդլայնվող հողամաս հնարավոր է մուտք գործել բացառապես օտարվող հողամասից և որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքով մեկ տարվա ընթացքում օտարել Նիկոլայ Վլադիմիրի Հարությունյանին, Նուրվարդ Բախշիի Հարությունյանին, Սուսաննա Յուրիի Հարությունյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 307544 / երեք հարյուր յոթ հազար հինգ հարյուր քառասունչորս/ ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 6834,3 /վեց հազար ութ հարյուր երեսունչորս ամբողջ երեք / ՀՀ դրամ:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 113-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1.2. կետի պահանջներով,

հիմք ընդունելով Հայ Առաքելական եկեղեցու Մասյացոտնի թեմի առաջնորդ Գնորգ եպիսկոպոս Սարոյանի 2022 թվականի հուլիսի 18-ի գրությունը ՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. ՀՀ, Արարատի մարզի, Մասիս համայնքի, Նոր Խարբերդ բնակավայրի 1-ին փողոց 12/24 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.5հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 03-070-0113-0032, սեփականության իրավունքի վկայական 09062021-03-0049/ սեփականության իրավունքով անհատույց տրամադրել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եկեղեցիների և եկեղեցապատկան կառույցների շինարարության ու դրանց սպասարկման համար:

Կողմ-18 Դեմ-1 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 114-Ա/

Լսեցին

***ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/***

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի և Հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով Մասիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է՝**

1.Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնք Արևաբույր Կ. Դեմիրճյան փողոց 12 հողամաս հասցեում գտնվող 1,5 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման նշանակության հողամասը /պետական գրանցման վկայական N 22082023-03-0072/ նվիրատվությամբ տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 115-Ա/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 225-Ա ՈՐՈՇՄԱՆ 33-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N33-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ/***

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է**

1.Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 15-ի N225-Ա որոշման 33-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ /33-րդ հավելվածը կցվում է/:
2.Ուժը կորցրած ճանաչել Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 14-ի ,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 225-Ա ՈՐՈՇՄԱՆ 33-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N 270-Ա ՈՐՈՇՄԱՆ 33-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N33-Ա որոշումը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի ապրիլի 22-ից:
Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 116-Ա/
Լսեցին
***,,ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՇՏԱՎԱՆ ԳՅՈՒՂԻ ՄՍՈՒՐ-ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ,, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***/Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ/***
Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածով **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է՝**

1.Թույլատրել մեկ տարվա ընթացքում ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի սեփականություն հանդիսացող՝ Մարզ Արարատ, համայնք Մասիս գյուղ Դաշտավան Գ. Տոնոյան փողոց 2/1 հասցեում գտնվող շենքը, (սեփականության վկայական N03042024-03-0077, կադաստրային ծածկագիրը՝ 03-033-0036-0012-001-002, տեսակը՝ մանկապարտեզ, մակերեսը՝ 413.6 քմ) անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով տրամադրել «ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի Դաշտավան գյուղի մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի ապրիլի 22-ից:
Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 117-Ա/
Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N225-Ա ՈՐՈՇՄԱՆ 28-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N243-Ա ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-Ի N270-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ 28-ՐԴ ՀԱՎԵԼԱՎԱԾՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***/Զեկ. ՏԻԳՐԱՆ ԲԱԲԱԽԱՆՅԱՆ/***
Ղեկավարվելով ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է**

1.Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 15-ի N 225-Ա որոշման 28-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ /հավելվածը կցվում է/:
2.Ուժը կորցրած ճանաչել Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 18-ի ,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 225-Ա ՈՐՈՇՄԱՆ 23-ՐԴ, 28-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N243-Ա և Մասիս համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 15-ի ,,ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 225-Ա ՈՐՈՇՄԱՆ 29-ՐԴ, 30-ՐԴ, 31-ՐԴ, 33-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ, 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N243-Ա ՈՐՈՇՄԱՆ 28-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ, 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 06-Ի N266-Ա ՈՐՈՇՄԱՆ 32-ՐԴ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 06-Ի N267-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 270-Ա որոշումների 28-րդ հավելվածները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի ապրիլի 22-ից:
Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 118-Ա/
Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-Ի N 09-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***/Զեկ. ՀԵՐՄԻՆԵ ԲԱԲԱՅԱՆ/***
Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով աշխատակազմի գլխավոր մասնագետ /սոցիալական ոլորտը սպասարկող/ Հերմինե Բաբայանի 09.04.2024 թ-ի զեկուցագիրը **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 09-Լ որոշման 15-րդ կետի 2-րդ ենթակետի <<բնակվում են>> բառերից հետո լրացնել <<և հաշվառված են Մասիս>>:
Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 119-Լ/
Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ***
***/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/***
Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով, **Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշել 2024 թվականի մայիսի 17-ը:
Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 120-Ա/

Ավագանու անդամներ

ԱՆՈՒՇ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԱՖՐԻԿՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԲԱԲԱՅԱՆ

ԱՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԱՐՍԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ԿԱՐԻՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՀԱԿՈԲՅԱՆ

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՄԵԼԻՔ ՆԱԶԱՐՅԱՆ

ԵՐԵՄ ՇԱԲՈՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՎԱՆՅԱՆ

ԷԴՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԵԼԻԶԱՎԵՏԱ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՋՈՀՐԱԲ ՕՍԵՅԱՆ

*Համայնքի ղեկավար*

ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ________________

*Նիստն արձանագրեց՝* Վարդան Գաբրիելյանը

____________________________________

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-Ի

ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ

ՑՈՒՑԱԿ

2024 թվականի ապրիլի 19-ի ավագանու հերթական նիստի

| ՀՀ | Ազգանուն | Անուն | Հայրանուն | Ստորագրություն |
|---|---|---|---|---|
| 1 | Համբարձումյան | Դավիթ | Միհրի | |
| 2 | Հակոբյան | Նորայր | Արեգի | |
| 3 | Եղիազարյան | Արսեն | Գագիկի | |
| 4 | Արամայիսյան | Կարեն | Գագիկի | |
| 5 | Օհանջանյան | Ելիզավետա | Գրիգորիի | |
| 6 | Օսեյան | Զոհրաբ | Հայկի | |
| 7 | Կարապետյան | Կարեն | Բաբկենի | |
| 8 | Նահապետյան | Անի | Համլետի | |
| 9 | Շաբոյան | Երեմ | Մանվելի | |
| 10 | Ավանեսյան | Արթուր | Արկադիի | |
| 11 | Աֆրիկյան | Նունե | Ջանիբեկի | |
| 12 | Վարդանյան | Էդվարդ | Հրաչյայի | |
| 13 | Սարգսյան | Վարդուհի | Ռուբիկի | |
| 14 | Վանյան | Նաիրա | Մարտիկի | |
| 15 | Նազարյան | Մելիք | Դմիտրիի | |
| 16 | Մելքոնյան | Հայկ | Ներսեսի | |
| 17 | Թադևոսյան | Արման | Աշոտի | |
| 18 | Գասպարյան | Արամ | Վլադիմիրի | |
| 19 | Ասատրյան | Անուշ | Ռոլիկի | |
| 20 | Բաբայան | Գևորգ | Միշայի | |
| 21 | Խաչատրյան | Լուսինե | Գառնիկի | |
| 22 | Ոսկանյան | Էլմիրա | Համլետի | |
| 23 | Բադալյան | Կարապետ | Նամեստի | |
| 24 | Մեսրոպյան | Կարապետ | Բագրատի | |
| 25 | Թովմասյան | Կարինե | Գևորգի | |
| 26 | Անդրեասյան | Արտակ | Մեհրաբի | |
| 27 | Ահարոնյան | Գայանե | Գեղամի | |